



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիր

## ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ



Ոռոգման նպատակով ձկնաբուծարանում կառուցվել է նոր պոմպակայան:

**Ծրագրի շնորհիվ 252 մարդ 98 տնային տնտեսություններից կօգտվի շուրջ 15 տարի անմշակ մնացած իրենց հողատարածքները ոռոգելու հնարավորությունից:**



Ձկնաբուծարանից ջուրը պոմպերի միջոցով մղվում է հարակից դաշտեր:

2018թ. սեպտեմբերին ավարտվեց Մայաթ-Նովա համայնքի ոռոգման համակարգի բարելավման ծրագիրը, որն իրականացվեց ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի, Հայ օգնության ֆոնդի, ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի և Մայաթ-Նովա համայնքի համատեղ ուժերով:

Համայնքային հողատարածքների 60 հեկտարի ոռոգումն իրականացվելու է Մասիս-Չուկ ձկնաբուծարանի հետադարձ ջրերով, որոնք նախկինում թափվում էին դրենաժային համակարգ: Նոր համակարգի շնորհիվ ոռոգումը կլինի ավելի մատչելի, իսկ ստորերկրյա ջրերի օգտագործումն ավելի արդյունավետ: Ձկնաբուծարանի տարածքում կառուցվել է նոր պոմպակայան, տեղադրվել է ոռոգման նոր համակարգ ավելի դիմացկուն պոլիէթիլենային խողովակներով: Ջրի որակի ստուգումները ցույց են տվել, որ ձկնաբուծարանի հետադարձ ջրերը կարող են օգտագործվել մշակաբույսերի աճեցման համար: ԳԱՏՕ ծրագրի մասնագետներն իրականացրել են Մայաթ-Նովա համայնքի հողատերերի ուսուցում կայուն գյուղատնտեսության վարման թեմայով:

Ներկա պահին 252 մարդ 98 տնային տնտեսություններից կօգտվի շուրջ 15 տարի անմշակ մնացած իրենց հողատարածքները ոռոգելու հնարավորությունից: Ամբողջ հզորությամբ գործածելու դեպքում համակարգը հնարավորություն է տալիս ոռոգել մինչ 190 հեկտար հողատարածք՝ ի շահ համայնքի բնակիչների:

Հայանիստից հետո Մայաթ-Նովան երկրորդ համայնքն է, որտեղ ԱՄՆ ՄԶԳ-ն իր գործընկերների հետ համատեղ իրականացրել է այլընտրանքային, բնապահպանական տեսանկյունից անվտանգ ծրագիր՝ տրամադրելով լուծումներ ոռոգման նպատակով ձկնաբուծարանի հետադարձ ջրերի երկրորդային օգտագործման համար: Նմանատիպ ծրագրեր կարող են արդյունավետ կերպով իրականացվել նաև մարզի մյուս համայնքներում՝ որոշ չափով լուծելով Արարատյան դաշտի ոռոգման ջրի սակավության խնդիրը: